Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Թմրանյութերից կախվածություն ունեցող բանտարկյալների նկատմամբ քրեական արդարադատության համակարգի արձագանքները

Տարածաշրջանային ծրագիր

Ո՞ւմ համար է օգտակար

- թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց, բանտարկյալների և նրանց հարազատների՝ Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում,
- քաղաքականություն մշակողների, որոնք պատասխանատու են քրեական արդարադատության և հանրային առողջապահության ոլորտում թմրանյութերի օգտագործման փոխկապակցված հարցերի համար,
- բանտերի բժշկական և ոչ բժշկական անձնակազմի,
- քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, որոնք ծառայություններ են մատուցում թմրանյութերից կախվածություն ունեցող՝ քրեական արդարադատության համակարգի հետ առնչվող անձանց:

Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար Ծրագրի նպատակները

- հիմնել տարածաշրջանային համագործակցություն և փոխանակել լավագույն գործելակերպերը բանտերի գերբնակեցման, ազատազրկման այլընտրանքների և վերականգնման հարցերի շուրջ՝ Հայաստանում, Վրաստանում, Մոլդովային Հանրապետությունում և Ուկրաինայում,
- բարելավել ազգային քաղաքականությունները բանտերի գերբնակեցման և ազատազրկման այլընտրանքների վերաբերյալ Վրաստանում եվրոպական չափանիշներին համապատասխան,
- ամրապնդել և բազմազանեցնել թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց բուժումը և վերականգնողական ծառայությունները Մոլդովայի բանտերում:

Ինչպե՞ս է աշխատելու ծրագիրը

- համապատասխան նախարարությունների, քրեակատարողական վարչությունների, միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ և գործընկերությամբ,
- փոխկապակցելով քրեական արդարադատության, հանրային

Ծրագրային գործողությունները

- կլոր սեղաններ և հետազոտություն Վրաստանի քաղաքականություն մշակողների համար ազատազրկման այլընտրանքների ճանապարհային քարտեզ մշակելու համար,
- սեմինարներ և վերապատրաստումներ թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց բուժման ծառայությունների վերաբերյալ Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի բանտերում,
- հոգեթերապևտիկ կլինիկաներով համալրված

http://eap-pcf-eu.coe.int

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Թմրանյութերից կախվածություն ունեցող բանտարկյալների նկատմամբ քրեական արդարադատության համակարգի արձագանքները

Տարածաշրջանային ծրագիր

առողջապահության և մարդու իրավունքների ոլորտներում քաղաքականությունը, գործելակերպը և գիտությունը,

- տարածաշրջանային համագործակցության, համակարգման և միջոլորտային քննարկման ֆորումների կազմակերպման, ինչպես նաև լավագույն գործելակերպի փոխանակման միջոցով:

Ի՞նչ կարժենա

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 400 000 եվրո:

Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար

- Ծրագիրը իրականցվում է Եվրոպայի խորհրդի՝ թմրանյութերի չարաշահման և թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի համագործակցային խմբի կողմից (Պոմպիդու խումբ):

բանտային խցերի վերանորոգում Մոլդովայի Հանրապետությունում,

- թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց առնչությամբ լավագույն գործելակերպերի փոխանակման և քրեական արդարադատության համակարգի արձագանքները բարելավելու ազգային և տարածաշրջանային ռազմավարությունները ներկայացնելու թեմաներով միջազգային համաժողովներ:

Ծրագրի տևողությունը

- Ծրագիրը կընթանա 2015 թ. հունվարի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը:
- Ծրագիրը մեկնարկել է 2015 թ. հունվարի 10-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար

- Թոմաս Կատաու, Ծրագրի ղեկավար, Thomas.Kattau@coe.int
- Ռոբերթ Թելզրոու, Ծրագրի գլխավոր խորհրդատու, Robert.Teltzrow@coe.int

Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Ֆինանսավորված է
Եվրոպական միության և
Եվրոպայի խորհրդի կողմից

Իրականացված է
Եվրոպայի խորհրդի
կողմից

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Թմրանյութերից կախվածություն ունեցող բանտարկյալների նկատմամբ քրեական արդարադատության համակարգի արձագանքները

Տարածաշրջանային ծրագիր

2014 թվականի ապրիլի 1-ին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնեցին, որ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ նպատակաուղղված համագործակցային աշխատանքներ կտարվեն «Ծրագրային համագործակցության շրջանակ»-ի (ԾՀՇ) սահմաններում:

Այս համագործակցային աշխատանքների միջոցով կբարելավվեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները ներպետական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որոնք, բացառությամբ Բելառուսի, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, մերձեցնելով դրանք եվրոպական չափանիշներին մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության ոլորտներում :

ԾՀՇ ընդհանուր բյուջեն 2015-2017 թվականների համար կազմում է 33.8 միլիոն եվրո: